ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.08.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/133

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.07.2019թ. թիվ 26/26-1/12714-2019 գրությամբ Ա/Ձ Սարուխան Մուշեղի Բրուտյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 29.07.2019թ. թիվ ՊՆ/02/1364-2019 գրության հիման վրա, 30.07.2019թ. թիվ 26/26-1/12714-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել Ա/Ձ Սարուխան Մուշեղի Բրուտյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Սարուխան Մուշեղի Բրուտյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Սարուխան Մուշեղի Բրուտյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/133 ընթացակարգի շրջանակներում 05.08.2019թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ Մասնակցի կողմից սահմանված ժամկետում ուղարկվել է ապրանքի ամբողջական նկարագիրը, որը սակայն ՀՀ պաշտպանության նախարարության կողմից գնահատվել է որպես թերի, որի պատճառով Մասնակցի հայտը մերժվել է: Հրավերով պահանջվել է, որ ապրանքը պետք է լինի գործարանային փաթեթավորմամբ և ապրանքի տեխնիկական բնութագրում պետք է նշվի արտադրողի անվանումը, նման պահանջը պահպանվել է Մասնակցի կողմից:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 29.07.2019թ. թիվ ՊՆ/02/1364-2019 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/6» ծածկագրով ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) հայտերի բացման նիստից հետո հրավերի պահանջներին բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցները սահմանված կարգով ծանուցվել են երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

Ընթացակարգի 2-րդ և 49-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից Սարուխան Մուշեղի Բրուտյան Ա/Ձ-ն որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը չի ներկայացրել (ընդհանրապես փաստաթուղթ չի ներկայացվել):

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/133 ընթացակարգի շրջանակներում 05.08.2019թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/133 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/133 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/6» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Սարուխան Մուշեղի Բրուտյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.06.2019թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ա/Ձ Սարուխան Մուշեղի Բրուտյանն Ընթացակարգի 2-րդ և 49-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին 11.07.2019թ. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցվել է հրավերի 2-րդ մասի՝ Ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.07.2019թ. նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ Սարուխան Մուշեղի Բրուտյան Ա/Ձ-ի հայտը մերժվել է:

5. <u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.07.2019թ. թիվ 26/26-1/12714-2019 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 29.07.2019թ. թիվ ՊՆ/02/1364-2019 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված

կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/6» ծածկագրով բաց մրցույթին հայտ ներկայացրած Սարուխան Մուշեղի Բրուտյան Ա/Ձ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.06.2019թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն Ընթացակարգի 2-րդ և 49-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին 11.07.2019թ. Armeps համակարգի

միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցվել է հրավերի 2-րդ մասի՝ Ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.07.2019թ. նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ Սարուխան Մուշեղի Բրուտյան Ա/Ձ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Մասնակցի կողմից սահմանված ժամկետում ընդհանրապես չի ներկայացվել ապրանքի ամբողջական նկարագիրը:

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ Ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսվել է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ նույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի.:

Սարուխան Մուշեղի Բրուտյան Ա/Ձ-ն հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/6» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հավելվածով Սարուխան Մուշեղի Բրուտյան Ա/Ձ-ն պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/6» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր), որը սակայն Ընկերության կողմից չի ներկայացվել:

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեն է **«v.sahakyan@mil.am»**:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից Armeps համակարգի միջոցով Մասնակցին 11.07.2019թ. ուղարկված ծանուցման մեջ նշվել է, որ հրավերով նախատեսված փաստաթղթերը Մասնակիցը պետք է ուղարկի գնահատող հանձնաժողովի **«v.sahakyan@mil.am»** էլեկտրոնային փոստին:

Մասնակիցը ներկայացրել է վերջինիս «avto878787@mail.ru» էլեկտրոնային փոստի համապատասխան էջի քաղվածքը, համաձայն որի Մասնակցի կողմից 16.07.2019թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/6» ծածկագրով բաց մրցույթի հրավերով նախատեսված փաստաթղթերը (թիվ 6 և 6.1 հավելվածները) ուղարկվել են **«a.baghramyan@mil.am»** էլեկտրոնային փոստին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետը սահմանում է, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/6» ծածկագրով Ընթացակարգի հրավերով, ինչպես նաև Մասնակցին 11.07.2019թ. ուղարկված ծանուցման մեջ հստակ նշվել է, որ հրավերով նախատեսված փաստաթղթերն անհրաժեշտ է ուղարկել գնահատող հանձնաժողովի քարտուղարի **«v.sahakyan@mil.am»** էլեկտրոնային փոստին, մինչդեռ Սարուխան Մուշեղի Բրուտյան Ա/Ձ-ն հրավերով նախատեսված թիվ 6 և 6.1 հավելվածներն ուղարկել է այլ էլեկտրոնային փոստին, որի հետևանքով գնահատող հանձնաժողովը չի ստացել համապատասխան փաստաթղթերը: Արձանագրում եմ, որ Սարուխան Մուշեղի

Բրուտյան Ա/Ձ-ի՝ որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/6» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին սահմանված կարգով չեն ներկայացվել հրավերով նախատեսված փաստաթղթերը, որի հետևանքով Մասնակիցը թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում:

Գտնում եմ, որ առկա են Սարուխան Մուշեղի Բրուտյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.07.2019թ. թիվ 26/26-1/12714-2019 գրությամբ Ա/Ձ Սարուխան Մուշեղի Բրուտյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Սարուխան Մուշեղի Բրուտյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**